Հավելված 1
Մասիս համայնքի ավագանու
2024թ օգոստոսի 23-Ի
N 236-Ա որոշման

ՆԱԽԱԳԻԾ

Մթնոլորտային օդի պահպանության, մթնոլորտային օդի բարելավմանն ուղղված միջոցառումների

Համայնքը –Արարատի մարզ Մասիս համայնք

Նախագծի անվանումը – Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի 12 հանրակացարանի թիվ 39 և թիվ 40 բազմաբնակարան մասնաշենքերի էներգաարդյունավետ արդիականացում

1.Ծրագրի նպատակը – Ծրագրի նպատակն է պարբերաբար նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները Մասիս համայնքի բնակելի շենքերի ֆոնդից՝ նպաստելով էներգաարդյունվետ արդիականացմանն ուղղված ներդրումների խոչնդոտների հաղթահարմանը և բարենպաստ շուկայական միջավայրի և մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդելների ստեղծմանը:

Ծրագիրը էապես նվազեցնելու է համայնքում շենքերի ԷԱ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի պատկերը՝ ազդակ հանդիսանալով, խրախուսելով և օրինակ ծառալելով մասնավոր հատվածի համար: Ծրագիրը կհանգեցնի էներգիայի էական խնայողությանը և դրա արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների էական նվազեցմանը, ինչպես նաև աղքատության կրճատմանը:

Այս ծրագրի շնորհիվ ամբողջությամբ կարդիականացվեն Մասիս համայնքի 3-րդ թաղամասի 12 հանրակացարանի 39 և 40 բազմաբնակարան մասնաշենքերը դարձնելով այն էներգաարդյունավետ:

2. Ծրագրի Խնդիրները - Հայաստանում շենքերի ոլորտը էներգիայի ամենամեծ սպառողներից մեկն է: Մասիս քաղաքում շենքերը մեծամասամբ կառուցվել են խորհրդային տարիներին, երբ հիմնականում անտեսվում էին էներգաարդյունավետության պահանջները: Հայաստանի ազգային հաղորդագրության համաձայն՝ առաջնային էներգետիկ ռեսուրսների գրեթե 28%-ը սպառվում է շենքերի կողմից՝ հիմնականում բնակելի հատվածում , որը կազմում է ջերմոցային գազերի ընդհանուր արտանետումների 20%-ը:

3. Ծրագրի իրականացման առաջնայնությունը - Նախագիծը նախաձեռնել է Մասիսի համայնքապետարանը համայնքի ղեկավարի գլխավորությամբ և հանդիսանում է առաջնահերթ խնդիր:

Սույն ծրագիրը նպաստում է հետևյալ կայուն զարգացման նպատակներին՝ ձեռնարկել անհապաղ գործողություններ՝ պայքարելու կլիմայի փոփոխության և դրական ազդեցությունների դեմ: Կրճատել քաղաքների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Օժանդակել տնտեսական, սոցիալական և բնապահպանական դրական կապերը քաղաքային բնակավայրում՝ ուժեղացնելով ազգային և տարածաշրջանային զարգացման պլանավարում:

Այս ծրագիրը կնպաստի Մասիս համայնքում բնակելի շենքերի ֆոնին ցածր արտանետումներին և կլիմայի տոկուն զարգացման առաջնահերթություններին համահունչ էներգարդյունվետության սկզբունքների կիրառմանը:

4. Ծրագրի բյուջեն կազմում է 50000,0 հազար դրամ, որից

- Բնապահպանական հարկից մասհանվող գումարները՝ 21773,6 հազար դրամ
- ՄԱԶԾ-ԿԿՀ ծրագիր՝ 12500,0 հազար դրամ
- Համայնքի ներդրում՝ 15726,4 հազար դրամ

Ծրագրի իրականացման ընթացքում առաջացած բոլոր խոչնդոտ ծախսերը կիրականացնի Մասիսի համայնքապետարանը:

Նախագիծը իրականացնելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ փուլերը.

1.Նախագծի ձեռք բերում և փորձաքննություն

2.Շենքերի էներգաարդյունավետ արդիականացման աշխատանքները՝

- Նախատեսվում է ջերմամեկուսացնել շենքերի արտաքին պատերը և տանիքները
- Նախատեսվում է փոխարինել աստիճանավանդակների և հարթակների դռներն ու պատուհանները, կառուցել նախամուտքեր և տեղադրել ժամանակակից լուսադիոդային լուսավորման համակարգ

5. Ծրագրի մշակման համար հիմք հանդիսացած հիմնախնդիրները. Համաշխարհային մասշտաբով շենքերի ոլորտը արտանետումների աճի դադարեցման ամենամեծ ներուժն ունի: Խորը էներգաարդյունավետության արդիականացումը, դրանց լայն կիրառության դեպքում կարող են մինչև 50-70% էներգախնայողության հանգեցնել:

Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 39 և թիվ 40 բազմաբնակարան մասնաշենքերի ջերմամեկուսացման և արդիականացման միջոցառումները կունենան ազդեցություն ջերմոցային գազերի արտանետումների նկատմամբ, կնվազի աղքատության ցուցանիշը, քանի որ այս շենքերում են բնակվում բնակչության առավել խոցելի շերտերը:

6.Ծրագրի ուղղակի շահառուները հանդիսանում են նշված շենքերի բնակչությունը /339 մարդ, որից 53% իգական, 47% արական/:

7. Ծրագրից ակնկալվող արդյունքները. Շենքերի ջերմաարդիականացման արդյունքում ջեռուցման համար ջերմային էներգիայի տեսակարար ծախսը նվազելու է 3-4 անգամ՝ կազմելով 52-72 կՎՏժ/տարի:

Շահառուները կխնայեն ջեռուցման և հովացման ծախսերի 40-60%-ը

Ջերմոցային գազերի արտանետումների կրճատումը կազմելու է 128տ CO2/տարի:

Շենքերի էներգաարդյունավետության դասը բարձրանալու է՝ «E-ից» հասնելով «B» դասի:

8. Ծրագրի իրականացման համար Շենքերը ենթարկվել են սեյսմիկ փորձաքննության, որի եզրակացության համաձայն

- Շեքերը 4 հարկանի են
- Թիվ 40 շենքն ունի 2160քմ մակերես /արտաքին եզրաչափերով/, իսկ թիվ 39 շենքը՝ 2800քմ մակերես /արտաքին եզրաչափերով/ :
- Շենքերն ունեն 2-րդ աստիճանի վնասվածություն, ինչը համապատասխանում է էներգաարդյունավետ արդիականացման և ջերմամեկուսացման համար սահմանված չափորոշիչներին: